ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ XV ԴԱՐՈՒՄ

Գ. Ե. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ներքին Խաչենում, XV դարում տակավին շարունակում էին իշխել Հասան-Ջալալյան իշխանական տան ներկայացուցիչները։ Իշխանական տան հիմնադիր Հասան-Ջալալը սերում էր Ներքին Խաչենում իշխող Վախթանգյաններից։ Նա երկրի հասարակական-քաղաքական կյանքի աչքի ընկնող գործիչներից էր։ Հասան-Ջալալը մեկն էր այն հայ ֆեոդալներից, որը փորձեց դիմադրել իր իշխանության սահմանները խուժած մոնղոլ հրոսակներին։ Սակայն, այս շրջահայաց իշխանը, նկատի ունենալով ստեղծված բացառիկ ծանր իրավիճակը, կարողացավ ընդհանուր լեզու գտնել մոնղոլների հետ։ Համաձայն Գանձակեցու, երբ մոնղոլները մտան Խաչեն, Հասան-Ջալալը, գավառի բնակչության հետ, ապավինեց Խոխանաբերդի պարիսպներին։ Մոնղոլները պաշարեցին Խոխանաբերդը, բայց երբ համոզվեցին, որ անհնար է գրավել այն, դիմեցին այլ միջոցի։ Նրանք Հասան-Ջալալին առաջարկեցին հպատակվել իրենց, փոխարենը խոստանալով նրան կյանքի ապահովություն։ Հասան-Ջալալը, ինչպես վկայում է Գանձակեցին, իմաստնաբար ընդունեց մոնղոլների առաջարկը և թանկարժեք ընծաներով գնաց մոնղոլ զորապետների մոտ։ Մոնղոլ զորապետները լավ ընդունեցին Հասան-Ջալալին և ճանաչեցին նրան որպես Ներքին Խաչենի իշխան։ Իսկ Ջալալը իր հերթին պարտավորվեց իր զինական ուժերով մասնակցել մոնղոլների արշավանքներին[1]։

Մոնղոլների տիրապետության առաջին շրջանում Հասան-Ջալալի իշխանությունը մտնում էր Ավագյան Թումանի մեջ, սակայն XIII դարի 50-ական թվականներին նրանից անջատվեց՝ կազմելով ռազմա-վարչական առանձին միավոր։ Հասան-Ջալալյանների ֆեոդալական տիրույթը, որպես առանձին միավոր, որոշ ժամանակ ենթարկվեց Խաքանին, իսկ հետո, «Գյուրջիստանի վիլայեթի» կազմում՝ Իլխանությանը[2]։ Մոնղոլների վարած անջատողական այս քաղաքականությունն նպատակն էր թուլացնել որոշակի ուժ ներկայացնող հայ իշխաններին։ Նման քաղաքականությունը ունեցավ այն տխուր հետևանքը, որ թուլացավ առանց այդ էլ արդեն թուլացած Զաքարյան ֆեոդալական իշխանությունը և չկարողացավ դիմագրավել մոնղոլների վարած ծանր հարկային քաղաքականությանը։ Մոնղոլները հակամարտ ուժեր էին ստեղծում հայկական ֆեոդալական իշխանությունների միջև՝ մեկին տրամադրելով ընդդեմ մյուսի։ Այդ քաղաքականության զոհերից մեկը դարձավ Հասան-Ջալալը։ Մոնղոլների հետ ստեղծած խնամիական կապը, ինչպես նաև վարած ճկուն քաղաքականությունը չփրկեցին Հասան-Ջալալին։

---

1 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 269։

2 Տե՛ս Լ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13—14-րդ դարերում, Երևան, 1964, էջ 235—36։

1254 թ. աշխարհագրից հետո հալածանքը շարունակվեց մի քանի հայ իշխանների նկատմամբ, որոնք փորձում էին գիմադրել Արղունի վարած դաժան հարկային քաղաքականությանը։

Չտանելով մոնղոլների հարկային ծանր լուծը, որի նպատակն էր տնտեսապես թուլացնել և քայքայել տեղական իշխանություններին, հայ և վրաց ֆեոդալների մի մեծ խումբ, Դավիթ թագավորի գլխավորությամբ, 1259—61 թթ. ապստամբեց մոնղոլների դեմ[3]։

Հասան-Ջալալը ևս մեղադրվում է 1259—61 թթ. հայ-վրացական ապըստամբությանը մասնակցելու համար և Արղունի հրամանով գազանաբար սպանվում է Ղաղվինում։ «Իսկ զբարեպաշտ և զառաքինի իշխանն Ջալալ Նեղէր անհնարին կտանօք, բաղում հարկս պահանջելով ի նմանէ՝ առաւել քան զկարն. եղեալ փայտ ի պարանոց նորա և երկաթ յոտս նորա»[4]։

Ջալալին և հայ մյուս իշխաններին մեղադրում էր նաև Արղունի հլու կամակատար Սմբատ Օրբելյանը և աշխատում ասպարեզից հեռացնել նրանց, որովհետև լուրջ մրցակիցներ էին հղորացող Օրբելյանների ճանապարհին։ Անձնական շահերի ետևից ընկած՝ նա ոտնահարում էր ամեն ինչ՝ և՛ հայրենիք, և՛ սեփական ժողովուրդ։ Որ իրոք, բարձրացող Սմբատ Օրբելյանը հաշվեհարդար էր տեսնում իր մրցակից իշխանների հետ, վկայում է նաև պատմիչ Ստեփաննոս Օրբելյանը. «Եւ Սմբատ զբաղումս թշնամիս թագավորութեան նորա ի մեծամեծ զոհոպանուոյն տայր սպանանել ի զրան արքունի»[5]։ Պատճառը շատ պարզ էր։ Այդ իսկ առումով, Հասան-Ջալալը իր ունեցած դիրքով ու հեղինակությամբ թերևս ամենավտանգավորն էր Օրբելյանների համար։ Գանձասարի վանքի մի արձանագրության մեջ Ջալալը իրեն կոչում է «...Բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհին թագաւոր և յոգնասահման նահանգի»[6]։ Ջալալը թագավորի տիտղոսով է պատվում նաև Մեծարինից ս. Հակոբ վանքի արձանագրություններից մեկում, որ թողել է Ջալալի ստորադրյալներից մեկը, վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ։ «Թագաւոր Ջալալ Դաւլի հրամանաւ ես Սմբատ որդի Հեջուբին տվի էգտեղ. սոքա արասցեն ժամ»[7]։ Հասան-Ջալալը մեծ հեղինակություն ուներ նաև իր իշխանության սահմաններից դուրս։ Հասանը գնում է Սարթախի մոտ, որի կողմից ընդունվում է «սիրով և մեծարանօք»[8]։ Ապա Հասան-Ջալալը Սարթախի առաջնորդությամբ ներկայանում է Բաթուին, որի կողմից ևս մեծ հարգանքի է արժանանում։ «Եւ տարեալ առ հայրն իւր, մեծապատիւ արար և ետ ի նա զհայրենիս իւր զՁարարերդ և զԱկնայ և զԿարկառն, զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ ազգն թուրքաց և վրաց»[9]։ Հուլավուայի և Բաթուի մոտ ունեցած հեղինակությունն էր պատճառը, որ Ջալալը հանդես եկավ որպես միջնորդ մոնղոլների և Կիլիկիայի Հեթում I թագավորի միջև 1254 թ. պայմանագրի կնքման գործում։

---

3 Նույն տեղում, էջ 272։

4 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն, էջ 390—91։

5 Ստեփաննոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 183։

6 Ս. Ջալալյան, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 183։

7 Նույն տեղում, էջ 195։

8 Տե՛ս Կ. Գանձակեցի, Պատմություն, էջ 358։

9 Նույն տեղում, էջ 392։

1261 թ. սպանված Հասան-Ջալալին փոխարինում է որդին՝ Աթաբեկը[10]։ Նրա մասին կցկտուր տեղեկություններ են հասել։ Դրանք մի քանի վիմական արձանագրություններ են Գանձասարի վանքում, որոնցից վերջինը վերաբերում է 1282 թ. «Ես տէր Ներսէս, Ամարասայ եպիսկոպոս, եկի մեծաւ յուսով ի սուրբ ուխտս իշխանութեամբ Աթաբակի... ՉԼԱ»[11]։

Սկսած 1282 թ. մինչև 1383 թ. աղբյուրներում Հասան-Ջալալյանների մասին հիշատակությունների չենք հանդիպում։ Կարապետ եպիսկոպոսը իրավացիորեն դանում է, որ XIII դարի վերջերից իշխանական այս տունը թուլացել էր և նրա կալվածքներին տիրում էին Դոփյանները[12]։

Այս միտքը հաստատում են XIV—XV դարերում Դոփյանների թողած որոշ արձանագրություններ, որոնցում Դոփյան իշխաններն իրենց տեր են համարում Ակնա, Հանդարերդի, Հաթերքի և Խաչենի այլ վայրերին։ Հարյուրամյա լռությունից հետո, 1383 թ. սկսած, ժամանակի աղբյուրները նորից սկսում են խոսել ջալալյանների մասին։

1383 թ. մայրաքաղաքի եպիսկոպոսարանում ավետարան կազմող դրիչը, որպես Խաչենի իշխան է հիշատակում Ջալալին։ «ՊԼԲ էր, մեհեկի ամսի ԻԶ. էր, որ կազմեցաւ, որ է սուրբ աւետարանս մեծ կողմանս Խաչենոյ Եպիսկոպոսարանէն մայրաքաղաքէնս, իշխանութեան պարոն Ջալալին, եպիսկոպոսութեան էր Գրիգորին Գեոաքարեցին (ոյն)»[13]։ Ճիշտ է, գրիչը մանրամասն տվյալներ չի հաղորդում պարոն Ջալալի մասին, սակայն պարզ է, որ նա XIV դարի վերջերին Խաչենը կառավարող իշխանն էր։ Հավանաբար, այս Ջալալ իշխանից սկսած իշխանական տունը աստիճանաբար սկսեց հզորանալ և XV դարի երկրորդ կեսին իր քաղաքական-հասարակական գործունեությամբ աչքի ընկնող դեր էր խաղում երկրի քաղաքական կյանքում։ Այս երևույթը մասամբ կարելի է բացատրել նրանով, որ մոնղոլական դաժան տիրապետությանը հաջորդած Թեմուրի և ապա թուրքմեն ցեղերի աշխարհակործան արշավանքներից Արցախը, համեմատաբար, ավելի քիչ տուժեց, քան Հայաստանի մյուս շրջանները։

Ջալալյանների մասին XV դարին վերաբերող առաջին տեղեկությունը մեզ հաղորդում է Գանձասարի վանքում Ուլուբեկի թողած արձանագրությունը։ Ուլուբեկը Ջալալյան իշխանական տան շառավիղներից էր՝ Մեջլիսի որդին։ Նա 1407 թ. Գանձասարի վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ արձանագրություն է թողել, որի բովանդակությունից իմանում ենք, որ նա տվյալ ժամանակաշրջանում Խաչենում իշխող Ջալալյան Զազա իշխանի ենթականերից մեկն էր։ «Կամաւն Աստուծոյ ես Ուլուբէկս որդի Մեջլիսին տուի զիմ հայրենի հողն Ղուղտանոսի կտորն որ ի Վարդան Բերանացէ իւր սարհատուն ի սբ. ուխտս Գանձասարայ իմ հոգւոյ յիշատակ, յառաջնորդութեան Մատթէոս վարդապետին եւ իշխանութեան Զազին... ՊԾԶ թուին»[14]։ Ճիշտ է արձանագրու-

---

10 Նույն տեղում։

11 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 123, նաև Մ. Բարխուդարյան, Արցախ, Բագու, 1895, էջ 178։

12 Տե՛ս Կարապետ եպիսկոպոս, Նյութեր հայ մելիքության մասին, պրակ Բ, էջմիածին, 1914, էջ 96։

13 Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 263։

14 Շահխաթունյան, Ստորագրութիւն կաթողիկե էջմիածնի և հինգ գաւառաց Արարատայ, հ. Բ, էջմիածին, 1842, էջ 374—75։

Թյունում Ուլուբեկի Զաղային ենթարկվելու փաստը ուղղակի չի ակնարկված բայց այն հանդամանքը, որ Զաղան արձանագրությունում հիշատակված է որպես տեղի իշխան, խորհել է տալիս, որ նա սյուզերենի իրավունք ուներ ջալալյան մյուս իշխանների նկատմամբ։ Մակար Բարխուդարյանը իր կազմած Խաչենի իշխանների ճյուղագրությունում չի հիշատակում Զազայի անունը։ Հաթերքի Վախթանդ Բ-ին, գրում է Բարխուդարյանը, հաջորդել է որդին՝ Հասան Ջալալ-Տոլան, իսկ սրան՝ Աթաբեկ ե Ուքան որդիները։ Աթաբեկին հաջորդել է որդին՝ պարոն Ջալալը, իսկ սրան էլ իր որդին՝ Աթաբեկ Բ-ն։ Աթաբեկ Բ-ին հաջորդել են Աղպաստանը, ապա Սայդունը, Հագիր Մելիքը և այլն[15]։ Բարխուդարյանի կազմած ճյուղագրությունը կարոտ է որոշ ճշտումների և լրացումների։

Այսպես, Ջալալյանների ճյուղագրությունը կազմելիս, Բարխուդարյանը չի հիշատակում 1383 թ. Խաչենում իշխող Ջալալին, որի մասին արդեն խոսեցինք վերևում։ Ջալալը իշխել է մինչև XV դարի սկիզբը, սրան, հավանաբար, փոխարինել է Զաղա իշխանը, որը հիշատակվում է 1407 թ. Ուլուբեկի արձանագրությունում։ Մեզ հասած փաստերը վկայում են, որ Զաղան իշխանությունը վարել է տասը տարի։ Վերևում բերված արձանագրությունից իմացանք, որ 1407 թ. նա արդեն Խաչենի գլխավոր իշխանն էր։ Նրա մասին վերջին տեղեկությունը մեզ հաղորդում է Մատթեոս Մոնոզոն գրիչը, 1417 թ. Գանձասարի վանքում գրած իր ձեռագիր հիշատակարանում։ Դառն գույներով նկարագրելով Հայաստանի ծանր վիճակը, նա ցավով նշում է, որ քայքայվել են հայկական ֆեոդալական իշխանությունները, երկրում տնօրինություն են անում անօրեն տիրապետողները, «...Իսկ տանս Խաչենոյ բարեպաշտ ոմն կայր՝ Զաղա անուն, այն փոխեցաւ յաստեացս, և մնացեալքն յազգէ սորին՝ Ջալալն և որդիք նորին, և որդիք Զազային՝ Արղութէն և Ջալալադաւէն, և եղբայրք նորին՝ Էլէգումն և Էլէգանն՝ են ի ներքոյ ձեռին անօրինացն. և այսպես պակասեալ է իշխանութիւն տանս Հայկազեան»[16]։

1417 թ. Զազայի մահից հետո իշխանությունը վարել է նրա ազգական Ջալալը, որը հիշատակվում է վերը բերած ձեռագիր հիշատակարանում։ Ջալալը Զազայի մերձավոր ազգականն էր, հավանաբար, նրա հորեղբոր որդին։ Նա ազդեցիկ դիրք է ունեցել Զազայի կենդանության օրոք, այդ իսկ պատճառով նրա անունը հիշատակված է Զազայի հետ։ Եվ քանի որ Զազայի եղբայրները, ինչպես նշում է գրիչը, գտնվում էին անօրենների ձեռքում, իսկ նրա որդիները, հավանաբար, անչափահաս էին, այդ պատճառով իշխանությունն անցել է Ջալալին։ Ջալալը իշխել է մինչև XV դարի 40-ական թվականները։ Նրա մասին հիշատակված է նաև 1456 թ. Գետամեջ վանքում գրված մի ձեռագիր հիշատակարանում. «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ մտերիմ և անընդարձուս և ամենայն առաքինութեամբ զարգարեալ՝ տեսականաւն և գործնականաւն՝ Թովմայի կուսակրաւն աբեղայի, ի թ(վ)ականութեանս հայկազեան տումարի ՉԵ (1456), ի հայրապետութեան Աղուանից նահանգի տեառն Յոհանիսի՝ որգոյ մեծի իշխանին Հայոց պարոն Ջալալին...»[17]։ Ջալալին հաջողվել էր վերականգնել իր տոհմի երբեմնի հզորությունն ու փառքը, այդ իսկ

15 Տե՛ս Մ. Բարխուդարյան, Պատմություն Աղվանից, Վաղարշապատ, 1902, հ. Ա, էջ 209։

16 «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1955, մասն Ա, էջ 194։

17 Նույն տեղում, 1958, մասն Բ, էջ 66։

պատճառով գրիչը նրան անվանում է հայոց մեծ իշխան։ Այդ նույն տիտղոսով է նա մեծարված նաև 1471 թ. Գանձասարի վանքում նրա որդու թողած արձանագրությունում։ «Ես Պաստամ որդի մեծին Ջալալին տվի Կունճի հողին կալէն վեր ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսէսին թվ. ՉՀ»[18]։

Ինչպես նշում է Լ. Խաչիկյանը, Հովհաննես կաթողիկոսը Աղպաստայի եղբայրն էր[19]։ Հետևաբար, Աղպաստան Ջալալի որդին է, որը և հաջորդել է իր հորը։ Աղպաստան Ջալալյան տան իշխանությունը վարել է 1443 թվականից, կամ սրանից մի փոքր առաջ։ Նրա մասին առաջին տեղեկությունը մեզ տալիս է 1443 թ. Գանձասարի վանքի մի արձանագրություն, որը թողել է Ջալալի որդի տեր Վարդանը, Գանձասարին հողամաս նվիրելու առթիվ։ Այնտեղ ասված է. «Ես տէր Վարդան, որդի Ջալալին, տուի Ծակ խաչին հողն ի սբ. ուխտս Գանձասարայ իշխանութեամբ Աղպաստայ առաջնորդութեամբ տր Եղիային... թուին ՊՂԲ»[20]։

Ուստի Մ. Բարխուդարյանի այն միտքը, թե Ջալալը ունեցել է Աթաբեկ Բ անունով որդի, որը և հաջորդել է նրան, անհավանական է։ Տրամաբանորեն հերքվում է նաև Բարխուդարյանի այն միտքը, թե Աղպաստան Աթաբեկ Բ-ի որդին է[21]։ Աղպաստան Հասան Ջալալյան իշխանական տան ամենաազդեցիկ իշխան էր XV դարում։ Ժամանակի աղբյուրներում նա տիտղոսավորված է «Մեծ իշխան» կոչումով։ Առաջաձոր գյուղի եկեղեցում գտնված մի Աստվածաշնչից Մ. Բարխուդարյանը Աղպաստա իշխանի մասին քաղել է հետևյալ արժեքավոր վկայությունը.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ, փաթիշահութեան Ջայան (Ջհան) Շահիս Ուլու Պէկս որդի Մէջլիսին՝ թոռն մեծին Ճալալին, ես Շահնշէս որդի Մեհրապին թոռն Արղութինի մեր հայրենեացս մէջն խաւսք իլաւ (եղաւ) պարոն Ուլու Պէկին թալեղ մէկ մարդ մեռաւ. Արապայ հողին վեր, դինացինք պարոն Աղայապաստին մուտ (մօտ). երեք սահրատին վեր արիւն կապեց, Արապայ հողն երետ Ուլու պէկին, սարհատն շինեց Առաջաձորաց ջուրն ու վեր գայ Ցամաքձորն, ջուրն վեր գայ Ցեց դրած քարերն... Այսչանք հանդ տեղ ա Շահանշին, իւր հայրենիք է, այլուն պուն բան չկայ (այլում ոչինչ չկայ), որ այլայլում անի, այն (նա) նահլաթ լինի. այս պայմանիս կապած Եղիա եպիսկոպոս առաջնորդ Գանձասարայ վկ. ես Յովհաննէս կաթողիկոս որդին Ջալալին, թոռն Մեծին Աթաբէկին վկ. ես Աղպաստի որդի Ճալալին վկ. ես Աղէկս որդի Ճալալին վկ ես Միրզալիս որդի Տուրսունին վկ. Պաստամս վկ. ես Ամիր Հասանս որդի Ճալալին վկ. թ. Ջե»[22]։

Այս հիշատակարանը նախ հաստատում է, որ Աղպաստան Ջալալի որդին է. իսկ Աթաբեկ Բ-ն, որին Բարխուդարյանը համարում է Ջալալի որդին, իրականում Ջալալի հայրն է։ Ստորագրողներից Հովհաննես կաթողիկոսը գրում է. «Ես Յովհաննէս կաթողիկոս որդի Ջալալին, թոռն մեծին Աթաբեկին վկ.»։ Ապա, որ ամենաուշագրավն է, Հասան-Ջալալյան ֆեոդալական տան անդամ-

---

18 Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 178։

19 Տե՛ս Լ. Խաչիկյան, առաջաբան Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների, հ. Բ, էջ 69։

20 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 172։

21 Տե՛ս Մ. Բարխուդարյան, Պատմություն Աղվանից, հ. Ա, էջ 209։

22 Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 187։

ների միջև հողի համար վեճ է առաջացել և սրվել այն աստիճան, որ նույնիսկ մարդկային զոհեր են եղել։ Այս փաստը պերճախոս վկայություն է այն մասին, որ նույնիսկ այնպիսի ժամանակաշրջանում, երբ երկրում լիիրավ տիրություն էին անում անօրեն տիրապետողները, դեռևս իրեն զգացնել էր տալիս ֆեոդալական հասարակությանը հատուկ ներքին հակամարտությունը։

Այն հանգամանքը, որ վիճող կողմերը Աղպաստային են դիմել իրենց մեջ առաջացած վեճը լուծելու համար, վկայում է վերջինիս ազդեցիկ դիրքի ու հեղինակության մասին, ինչպես նաև հաստատում այն փաստը, որ Աղպաստա իշխանը Ջալալյան տան մյուս իշխանների նկատմամբ հանդես է եկել սյուզերենի իրավունքով։ 1460 թ. հետո աղբյուրներում Աղպաստայի մասին հիշատակության չենք հանդիպում։ Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ 1460 թ. կամ սրանից մի փոքր հետո նա մահացած պիտի լիներ։

Աղպաստային փոխարինել է որդին՝ Սայդունը, որը 1467 թ. Գանձասարի վանքին հող նվիրելու կապակցությամբ թողել է հետևյալ արձանագրությունը. «Կամաւն աստուծոյ ես Սայտուն որդի պարոն Աղբաստայ տուի իմ հայրենեացն զՏանձաշոր ի սբ ուխտս Գանձասարայ առաջնորդուբ տր Եղիային, սոքա նտուն տարին երեք ժամ... թուիս ՋԺԶ»[23]։

Սայդունի մասին սա մեզ հասած միակ գրավոր հիշատակությունն է։ Այդ պատճառով էլ դժվար է որոշել, թե նա մինչև երբ էր Ջալալյան տան գլխավոր իշխանը։ Համաձայն մի ձեռագիր հիշատակարանի տվյալների, արդեն 1473 թ. Խաչենում իշխում էր Սայդունի որդին՝ Վելիջանը։

«...Բայց արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի դաւառս Խաչենաձորոյ... ի տէրութեան տեղւոյս պարոն Վելիջանին, զոր տէր աստուած ընդ երկայն աւորս արասցէ»[24]։ Վելիջանը և իր եղբայրները 1480 թ. Գանձասարի վանքին հող նվիրելու կապակցությամբ արձանագրություն են թողել։ Այդ արձանագրությունը վերծանվել է երեք տարբեր թվականներով։ Ջալալյանը կարդացել է՝ ՋԽ (1491)[25], Շահխաթունյանը՝ ՋԽԹ (1500)[26], իսկ Կ. Կոստանյանցը և Մ. Բարխուդարյանը՝ ՋԻԹ (1480)[27]։

Ջալալյանը «խ» տառը շփոթել է «ի» տառի հետ և չի վերծանել «թ» տառը։ Շահխաթունյանը, ճիշտ է, «թ» տառը վերծանել է, բայց նա ևս «ի»-ն շփոթել է «խ» տառի հետ։ Կարծում ենք, որ Կ. Կոստանյանցը և Մ. Բարխուդարյանը ճիշտ են վերծանել։ Այդ իսկ պատճառով առաջնորդվում ենք նրանց վերծանումով։

«Կամաւն աստուծոյ ես Վէլիջան եւ եղբարքս իմ, որդիք Սայտունին, թոռն մեծին Աղպաստու տերաք Խաչենու տուաք Ալմանայ իւր Դ. սահմանաւն ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսէսի թվ ՋՀԹ»[28]։ Այն փաստը, որ արձանագրությունում հիշատակված է միայն Վելիջանի անու-

---

23 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 173, նաև Շահխաթունյան, Ստորագրություն, հ. Բ, էջ 375։

24 «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, էջ 344։

25 Տե՛ս Ս. Ջալալյան, նշված աշխատությունը, հ. Ա, էջ 187։

26 Տե՛ս Շահխաթունյան, Ստորագրություն, հ. Բ, էջ 375։

27 Տե՛ս Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 174, նաև Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 19։

28 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 174, Մ. Բարխուդարյան. Արցախ, էջ 179։

նը և այն էլ առաջինը, վկայում է այն մասին, որ Վելիջանը Ջալալյան տան գլխավոր իշխանն էր։ Մակար Բարխուդարյանը Ջալալյան տոհմի ճյուղագրությունում չի հիշատակում Վելիջանին։ Նա Վելիջան-Բեկ Ա անունով իշխան է հիշատակում XVI դարի երկրորդ կեսի համար, որը Հատիր Մելիքի ծոռն էր[29]։ Հասկանալի է, որ այս Վելիջան-Բեկ Ա-ն կապ չունի XV դարում ապրած Վելիջանի հետ։ Ուրեմն, Սայդունին հաջորդել է ոչ թե Հատիր Մելիքը, ինչպես գրում է Բարխուդարյանը, այլ՝ Վելիջանը։ Թե մինչև երբ Վելիջանը վարեց իշխանությունը դժվար է ասել, քանի որ 1480 թ. հետո նրա մասին աղբյուրներում հիշատակություն չկա։ 1493 թ. Գանձասարին հողամաս նվիրելու մասին արձանագրություն է թողել Ջալալյան Տուրսուն իշխանը. «Ես Տուրսունս. թոռն մեծին Ջալալին, տու Մսրսին հողն ի սբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տն Ներսէսին ... ՋԽԲ թուին»[30]։

Այդ նույն թվականին Գանձասարին հողամաս են նվիրել Ջալալյան Աթաբեկի որդիները՝ Այտինը և Խմշենը[31]։ Իրենց թողած արձանագրություններում ոչ Տուրսունը և ոչ էլ Այտին ու Խմշեն Վելիջանի անունը չեն հիշատակում։ Կարծում ենք, որ 1493 թ. նա արդեն մահացած էր։ Ըստ Մ. Բարխուդարյանի՝ XV դ. վերջին Ջալալյան տան իշխանությունը վարում էր Մելիքը։ Մելիքը Վելիջանի փոքր եղբայրն էր, ուրեմն հենց նա էլ հաջորդել է իր եղբորը։ Տեսանք, որ Վելիջանը իր թողած արձանագրությունում իրեն և իր եղբայրներին համարում է Խաչենի տերեր, որոնցից մեկը Մելիքն էր, որը և XV դարի վերջին վարում էր իշխանությունը։

1499 թ. Մելիքը Գանձասարի վանքում արձանագրել է տվել հետևյալը. «Ես, Մելիքս, որդի Սայտունին, թոռն մեծին Աղպաստու, տուի շուրջառ, սկիհ... Կակաշանց, Փտուռանց, Ծաղկավանց երկու ստակ գնեցի, տու ի սբ ուխտս Գանձասարայ... թուին ՋԽԸ»[32]։

Մելիքը իշխանությունը վարել է մինչև XVI դարի առաջին քառորդը։ Նա պատմությանը հայտնի է Հատիր-Մելիք անունով։ Սրա որդին էր Աղվանից Սարգիս կաթողիկոսը, որը 1556 թ. Գանձասարի վանքին կալվածքներ նվիրելու կապակցությամբ թողել է արձանագրություն. «Թուին ՋՂԵ... Ես Սարգիս որդի Հատիր Մելիքին, թոռն մեծին Սայտունին գնեցի զհայրենիքն ի Կասարայ ղ. ստակն մինակ տան, Դ. ստակ ու կէսն, Առատունոյ Բ. ստակն, Կոռաչանայ Դ. ստակն տվի սուրբ ուխտս Գանձասարայ»[33]։

Հասան-Ջալալյան իշխանական տան ներկայացուցիչները իրենց մենաշնորհն էին դարձրել նաև գավառի հոգևոր իշխանությունը։ Աշխարհիկ ֆեոդալների վերաղգեստավորումը կրոնավորի զգեստով, որը հատուկ էր Հայաստանի ողջ ֆեոդալական տներին, իր շրջապտույտի մեջ էր առել նաև Հասան-Ջալալյան ֆեոդալական տան իշխանազուններին։ Այսպես, XV դարի 20—30-ական թվականներին իշխող պարոն Ջալալի որդիներից Հովհաննեսը Աղվանից կաթողիկոսն էր, իսկ նրա մյուս որդին՝ տեր Վարդանը Գանձասարի վանքի առաջնորդը։ XV դարի վերջում իշխող Հատիր Մելիքի որդին՝ Սարգիսը

29 Տե՛ս Մ. Բարխուդարյան, Պատմություն աղվանից, էջ 209։

30 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 124, նաև Շահխաթունյան, Ստորագրություն, էջ 375, Բարխուդարյան, Արցախ, էջ 178։

31 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 175։

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում, էջ 177, Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 177։

ևս Աղվանից կաթողիկոսն էր։ Չպետք է կասկածել, որ ինչպես Գանձասարի, այնպես էլ Ջալալյանների իշխանության մեջ գտնվող մյուս վանքերի վանահայրերը Ջալալյան ծագում ունեին։ Խոսելով ԺԵ դարում նվիրատվության ձևերի մասին, Հ. Փափազյանը գտնում է, որ նույն ֆեոդալական տնից որևէ հոգևորական իր ազգակից աշխարհիկ ֆեոդալներից գնում էր կալվածքներ և նվիրում վանքին, միաժամանակ կտակում, որ իր մահից հետո վանքի տնօրենի պաշտոնը ստանձնի իր մերձավորներից որևէ մեկը։

Այդ բանը, շարունակում է իր միտքը Հ. Փափազյանը, մենք տեսնում ենք Գանձասարի կաթողիկոսների մոտ, Տաթևում, Աղթամարում և Հավուց Թառի Ամենափրկիչ վանքում[34]։ Այդպես էին վարվում նաև Դոփյան, Պռոշյան և Ապիրբեկյան իշխանական տների հոգևոր առաջնորդները։

Շատ հաճախ Գանձասարի կաթողիկոսները ավելի աղդեցիկ դիրք ու կշիռ ունեին երկրի քաղաքական կյանքում, քան որոշ աշխարհիկ իշխաններ։ Այդ կարելի է բացատրել նրանով, որ հոգևորականությունը ընդհանրապես, իսկ բարձրաստիճան հոգևորականները մասնավորապես, հովանավորվում էին թուրքմեն տիրապետողների կողմից։ «Փոշիացող հայ ֆեոդալ իշխանությունների փոխարեն թուրքմեն իշխողների ժամանակ նշանակալի հեղինակություն է ձեռք բերում հայ եկեղեցական հիերարխիան»[35], գրում է Աշոտ Հովհաննիսյանը։ Այս իսկ պատճառով Ջալալյան տան աշխարհիկ ֆեոդալներն իրենց տիրույթները նվաճողների հափշտակումից փրկելու նպատակով նվիրում կամ վաճառում էին վանքերին, կամ էլ հանձնում իրենց ազգակից վանական առաջնորդների հսկողությանը։

Գանձասարի կաթողիկոսների իրավունքները երբեմն օրենքի ուժ էին ստանում թուրքմեն սուլթանների, կամ նրանց մերձավորների կողմից տրված հրովարտակներով։

1462 թ. օգոստոսի 6-ի իր հրովարտակով Ջահանշահի կին Բեգում-Խաթունը հաստատում է Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի իրավունքները։ Նա հրամայում է թուրքմեն պաշտոնյաներին, որ չանհանգստացնեն Հովհաննես կաթողիկոսին և նրան ենթակա հոգևորականներին, նրանց ազատեն հարկերից և ցույց տան ամեն տեսակի օժանդակություն։ Հրովարտակում ուշադրավ է այն միտքը, որ Աղվանքի ողջ հայությունը Հովհաննես կաթողիկոսին պետք է ճանաչեր որպես առաջնորդ ու ղեկավար։ Ոչ ոք իրավունք չուներ նրան ընդդիմանալու և ոչ էլ միջամտելու նրա գործերին[36]։ Մեկ այլ հրովարտակ տրված է Յաղուբի կողմից 1478 թ. ապրիլի 24-ին Գանձասարի Շմավոն կաթողիկոսին[37]։ Ինչպես իր նախորդները, այնպես էլ Յաղուբը ճանաչում է կաթողիկոսի իրավունքները և հրամայում է տեղի մելիքներին, դարուղաներին և բեգխուդաներին, որ Գանձասարի վանքից, ինչպես նաև հոգևորականներից հարկեր չդանձեն, իսկ զինվորական առաջնորդներին՝ որ զինվորները չիջևանեն վանքապատկան կալվածքներում և չպահանջեն սնունդ՝ իրենց և կեր՝ ձիերի համար։

---

34 Տե՛ս Հ. Փ ա փ ա զ յ ա ն, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ առաջին, Երևան, 1956, էջ 26։

35 Աշ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 429։

36 Տե՛ս Հ. Փ ա փ ա զ յ ա ն, նշված աշխատությունը, էջ 47—48։

37 Նույն տեղում, էջ 50—52։

Յաղուբի հրամանով ողջ Աղվանքի բնակչությունը Շմավոն կաթողիկոսին պետք է ճանաչեր առաջնորդ և ենթարկվեր նրան։ Հովհաննես և Շմավոն կաթողիկոսներն այն պարոն-տերերից էին, որոնք օգտվելով թուրքմեն փատիշահերի բարձր հովանավորությունից, նվիրատվություններից, գնումների և այլ միջոցներով աեր էին դարձել հսկայական հողային տարածությունների. իսկ այդ հողերը մշակելու համար անհրաժեշտ էր աշխատող ուժ և միջոցներ։

Այսպիսով, Հասան-Ջալալյան իշխանական տունը XV դ. իր ձեռքն էր կենտրոնացրել Խաչենի հոգևոր և աշխարհիկ իշխանությունը։ Եթե դարի սկզբին իշխանական այս տունը թույլ էր, ապա դարի երկրորդ կեսից հզորացավ այն աստիճան, որ իր հարևան Դոփյան ֆեոդալական տան նկատմամբ ունեցավ սյունիքենի իրավունք։ Եթե հայկական մյուս ֆեոդալական տները քայքայվելով՝ XV—XVI դարերում անհետացան պատմության թատերաբեմից՝ իրենց տեղը դիջելով ռազմաքաղաքական աղնվականությանը, ապա Հասան-Ջալալյանները գոյատևեցին մինչև XX դարը և նրանց հոգևոր ու աշխարհիկ առաջնորդներից մի քանիսը մեծ դեր խաղացին հայկական ազգային-ազատագրական շարժումների կազմակերպման գործում։

КНЯЖЕСКИЙ РОД ГАСАН-ДЖАЛАЛЯНОВ В XV ВЕКЕ

Г. Е. КИРАКОСЯН

Резюме

Гасан-Джалал—основоположник княжеского дома Гасан-Джалалянов,— происходил из княжеского рода Вахтангянов в Нижнем Хачене. В 1261 г., после убийства Джалала, этот род стал ослабевать и с конца XIII до конца XIV века не играл активной роли в политической жизни страны. В XV веке сведения об этом роде встречаются чаще. Во второй половине века представители этого княжеского рода укрепили свое положение и стали играть более активную роль в общественной и политической жизни области. Представители княжеского рода Гасан-Джалалянов забрали в свои руки также духовную власть. Так, сын властвующего в 20—30 гг. Джалала Ованес был католикосом Агвана.